ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 604

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85,
Ֆաքս (+374 268) 2-33-62

19 հոկտեմբեր 2011թ.

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ 234-018 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՄԻ ՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԵՏԱԿԱՆՈՐԵՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել համայնքի ղեկավարին Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում ընդգրկված, 234-018 ծածկագրով հողամասի մի մասի՝ 190.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ պետականորեն գրանցել համայնքի սեփականության իրավունքը և տալ նոր ծածկագիր՝ 234-157: Նշված հողամասը հանդիսանում է համայնքի սեփականությունը համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հուլիսի 21-ի թիվ 1767-Ն որոշման, ըստ համայնքի գլխավոր հատակագծի ընդգրկված է «Բնակավայրերի հողերի» կազմում, մասնավորապես՝ բնակելի կառուցապատման գոտի /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 56 հոդվածի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38 հոդվածի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի համայնքի վարչական սահմաններում ընդգրկված «Բնակավայրերի հողերի» 234-018 ծածկագրով, 190.0քմ մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ Հակոբջանյան փողոց թիվ 94/3:
2. Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում, ըստ Դիլիջանի համայնքի հողերի կադաստրային քարտեզի 234-018 ծածկագրով հողամասի մի մասի՝ 234-157 նոր ծածկագրով, 190.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ